ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատ համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, գ.Արևշատ, 0 244 6 15 63, vip.arevshat@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 ՀՈՒՆՎԱՐԻ 2018թվականի N 1-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՎՇԱՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 20-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի դրույթներով

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 12-ի << Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արևշատ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 20-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1. ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍ

ա/ Որոշման 2-րդ տողում նշված <<Գույքահարկ փոխադրամիջոցների համար>> տողի <<3800.0>> թիվը փոխարինել <<4400.0>> թվով,

բ/ 7-րդ տողում նշված <<Պետական սեփականության հողերի վարձավճարներ>> տողի <<989.5>> թիվը փոխարինել <<1120.5>> թվով,

գ/ <<Կենցաղային աղբի վճարներ>> տողը հաստատել <<600.0>>, <<Աղբահանության վճարներ>> տողը հաստատել <<600.0>> , <<Տեղական վճարներ>> տողի <<600.0>> թիվը փոխարինել <<1200>> թվով:

2. ՏԱՐԵՍԿԶԲԻ ԱԶԱՏ ՄՆԱՑՈՐԴ

ա/ Համայնքի 2018 թվականի բյուջեի միջոցների տարեսկզբի մնացորդը լրացնել <<3866.4>> թվով, այդ թվում վարչական մասի մնացորդը՝ <<3747.6>> թվով, իսկ ֆոնդային մասի մնացորդը՝ <<118.8>> թվով:

բ/ 2018 թվականի համայնքի բյուջեի վարչական մասի 3747.6 հազար դրամ մնացորդի 1747.6 հազար դրամը ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս և ֆոնդային բյուջեն լրացնել <<1866.4>> թվով: Վարչական բյուջեն լրացնել <<2000.0>> թվով:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍ

ա/ Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժնի 01 խումբ 1 դաս 1 /օրենսդիր և գործադիր մարմինների պետական կառավարում/ ծրագրի <<20690.0>> թիվը փոխարինել <<21590.0>> թվով, և տնտեսագիտական